Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

18.01. 2019թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան (ԳԱ), Բ. Տեր-Թովմասյան (ԲԱ)
Լ. Գևորգյան (ԳԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. <<ԵՔ -ԲՄԱՇՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 16.01.2019թ–ին տեղի է ունեցել հայտերի բացման նիստ, որի ժամանակ «Հուսալի Կամար» ՍՊԸ–ի հայտում հայտնաբերվել է անհամապատասխանություն հրավերով սահմանված պայմանների նկատմամբ և նիստը կասեցվել է: 17.01.2019թ-ին ոչ ավտոմատ ծանուցման վերոհիշյալ կազմակերպությանը ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը մասնակցի կողմից շտկվել է:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «Հուսալի Կամար» ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտը գնահատվեց բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին

(Է. Շաքարյան)

2.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

--- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Հուսալի Կամար» ՍՊԸ –ն:
--- 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «Հ. Արամյան» ՍՊԸ –ն:
--- 3-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սեյսմանախագիծ» ՍՊԸ–ն:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Է. Շաքարյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Է. Շաքարյան)

4.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Ե. Մատասյան
		Լ. Գևորգյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան